ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Մանկավարժության մագիստրոս
ՀՏԴ 37.0

ՆԱՐ-ԴՈՍԻ «ԵՍ ԵՎ ՆԱ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Բանալի բառեր. պատմվածք, մեթոդ, սեր, կամք, ներքև, վերև, արհամարհանք, հպարտություն:

Ключевые слова*:* рассказ, метод, любовь, воля, вниз, вверх, презрение, гордость.

Keywords: story, method, love, will, down, up, contempt, pride

Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքն ունակ է սովորողների մեջ կերտել մարդկային վեհ գաղափարներ, զարգացնել բարոյական լավագույն հատկություններ և գեղագիտական ճաշակ, ընդլայնել պատկերավոր մտածողություն, զարգացնել խոսելու, մտածելու, դատելու և տրամաբանելու կարողություններ, ուստի թեմայի ուսուցումը պետք է ուղղորդված լինի այս նպատակների իրականացմանը, իսկ դրանց հասնելու համար անհրաժեշտ է կիրառել ուսուցման ակտիվ մեթոդներ:

Պատմվածքի ուսուցումը պետք է կազմակերպել ԽԻԿ համակարգով: Խթանման փուլում կարելի է կիրառել «Մտքերի տարափ կամ մտագրոհ» մեթոդը, քանի որ այն խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է Խթանման փուլում կիրառելու համար:[1] Սովորողներին անհրաժեշտ է հանձնարարել գրականության պատմողական ժանրերին առնչվող բառեր թվարկել և գաղափարներ արտահայտել: Նրանցից յուրաքանչյուրը պետք է արտահայտի սեփական տեսակետը՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները պետք է գրանցվեն մաքուր թղթի կամ գրատախտակի վրա: Այնուհետև անհրաժեշտ է ընդհանրացնել սովորողների թվարկած մտքերը և համառոտ տեղեկություններ տալ գրականության ժանրերի և հատկապես պատմվածքի մասին:

Իմաստի ընկալման փուլում անհարժեշտ է սովորողներին տեղեկացնել, որ Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքում իրենք տեսնելու են

[1] Սարուխանյան Ս.Ս., Դալլաքյան Ա.Ա., Դիշաղաջյան Ն.Հ., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, էջ 8:

երկու սիրո պատմություն, որտեղ տարբեր խավերի ներկայացուցիչների բախումը մարդաստեղծ խոչընդոտների հետ և այդ խոչընդոտներից դուրս գալու նրանց ընտրած տարբեր ճանապարհները՝ իրենց անկանխատեսելի վերջնարդյունքներով, նրանց առջև կբացեն կյանքի հարվածներին դիմակայող, հողին ամուր և հաստատ կանգնած մարդու կերպարը: Այնուհետև կարճատև դասախոսության միջոցով ուսուցիչը պետք է ներկայացնի քննվելիք նյութի առանցքային հարցերը և հանձնարարի տետրերում գծել 2 մեծ շրջան, որոնցից յուրաքանչյուրի ներսում՝ ևս 4 շրջան: Առաջին շրջանի կենտրոնում անհրաժեշտ է գրել ԵՍ, իսկ երկրորդի կենտրոնում՝ ՆԱ: Շրջանները պետք է համարակալվեն: Սովորողները գծագիրը պետք է լրացնեն և գունավորեն ընթերցանության ընթացքում՝ յուրաքանչյուր հատվածի շրջանակում լրացնելով համապատասխան առաջադրանքը՝ 1. Ի՞նչ եղավ, 2. Ի՞նչ է լինելու հետո, 3. Համապատասխանե՞ց ավարտն իմ պատկերացումներին, 4. Լրացնե՛լ համապատասխան թևավոր խոսքը: 4-րդ հանձնարարությունը լրացնելիս անհրաժեշտ է սովորողներին ուղղորդել՝ հանձնարարելով հետևյալ հատվածը խմբագրել այնպես, որ ստացվի թևավոր խոսք և գրել շրջանակի համապատասխան հատվածում.«Բայց դուք հաշվի չէիք առել, որ ներքև գտնվողները երբեմն թևեր են առնում, թռչում վերև: …Այսօր ես հասա իմ նպատակին: Բայց նորից սիրել նրան, ով խաղում է ուրիշի նվիրական զգացումների հետ, ով տարբերություն է դնում վերևի և ներքևի միջև, ավա՛ղ, սինյորա, ես չեմ կարող»:[2]

Սովորողները պետք է միմյանց շարունակելով գեղեցիկ ընթերցեն պատմվածքը, իսկ ընթացքում անհրաժեշտ է բացատրել նրանց համար անհասկանալի բառերը: Այնուհետև անհրաժեշտ է կիրառել «Իլյուստրացիա» մեթոդը, որը խնդիր է դնում ուսուցման գործընթացում ուսումնական նյութը հաղորդելիս կիրառել դիտազննական

[2] Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1995, էջ 128:

պարագաներ.ուսուցման արդյունավետությունն ավելի բարձր է լինում այն դեպքում, երբ պատմելը, զրույցը, բացատրությունը, դասախոսությունը զուգակցվում են իլյուստրացիային, այսինքն՝ ցուցադրմանը,[3] ուստի սովորողներին անհրաժեշտ է սահիկահանդեսի միջոցով ցուցադրել այն վայրերի նկարները, որոնց մասին գրված է պատմվածքում, ինչպես նաև տեղեկացնել, որ Վենետիկը քաղաք է Իտալիայում, որի անունը առաջացել է Վենետներ ցեղի անունից, Ադրիատիկ ծովը կամ Ադրիական ծովը Միջերկրական ծովի մի մասը կազմող կիսափակ ծով է Ապենինյան և Բալկանյան թերակղզիների միջև, իսկ Ռիալտոյի կամուրջը Վենետիկի (Իտալիա) ամենահայտնի կամուրջներից մեկն է, այն Մեծ Ջրանցքի չորս կամուրջներից առաջինն ու ամենահինն է: Սովորողները պետք ընթացքում գրառումներ անեն տետրում.այսպես կստեղծվի միջառարկայական կապ և կզարգանա նրանց պատկերավոր մտածողությունը, քանի որ պատմվածքում նկարագրվող դեպքերը և դեմքերը սովորողների հիշողության մեջ առավել ամուր հիմքերի վրա կհաստատավեն:

Կշռադատման փուլում անհրաժեշտ է ամփոփել, հնարավորություն տալ սովորողներին արժևորելու, օգտագործելու, կիրառելու իրենց սովորածն ու յուրացրածը:[4] Այս փուլում սովորողները համառոտ պետք է ներկայացնեն պատմվածքի բովանդակությունը, որից հետո անդրադարձ կատարեն իրենց կազմած աղյուսակին՝ համապատասխանեցնելով կամ ավելացնելով նոր մտքեր, որից հետոանհրաժեշտ է կիրառել «Վենիդիագրամ» մեթոդը: Այն օգտագործվում է նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:[5] Այստեղ անհրաժեշտ է ներկայացնել «Ես»-ի հերոսին և Անտոնիոյին բնութագրող հատվածները՝ ցույց տալով՝ ինչպիսի՞ն էին նրանք, ինչպիսի՞ն դարձան հետո և նրանց ընդհանրությունները: Այսպես.«Ես»-ի հերոսը փառավոր ապագայի հույսերով լեցուն, հասարակական լայն գործունեության երազանքներով թևավորված և երջանիկ սիրով խրախուսված իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող էր՝ միշտ լավ հագնված, լայնաթիկունք ու լայնակուրծք: Սիրելի

[3] Մեթոդական ցուցումներ ԹՕՊ-երի կազմման համար – GSPI, էջ 2:

[4] Տողանյան Ն., Խաչատրյան Հ., Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2008, էջ 4:

[5] Սարուխանյան Ս.Ս., Դալլաքյան Ա.Ա., Դիշաղաջյան Ն .Հ., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, էջ 12:

էակի մերժումը ստանալուց հետո նա վերածվում է կեղտից պլպլացող հնամաշ վերարկուով, մազակալած երեսով, պրոֆեսիոնալ արբեցողի կարմիր քթով, կուրծքը ներս ընկած սապատավոր մի մարդու: Այնուհետև սովորողները պետք է պատմվածքում գտնեն Անտոնիոյին բնութագրող հատվածները: Սովորողների ուշադրությունը պետք է հրավիրել այն հանգամանքին, որ Անտոնիոյին ներկայացնելիս հեղինակը նկարչի վիձնով իր ընթերցողի առջև պարզապես կերտում է մի դյութիչ և վեհ պատկեր.«Ի՜նչ հրաշալի աչքեր, բայց լուրջ ու խոհուն և թախծալի՝ ինչպես այն եղանակը, որ մի քիչ առաջ նվագում էր նա. ի՜նչ գրավիչ դեմք, բայց գունատ ու տխուր, ինչպես մարմարի միանդրի. ի՜նչ բարձր ու հպարտ ճակատ, որի վրա փայլում էր ոչ երկրային մի վեհություն»:[6] Սիրելի էակի մերժումը ստանալուց հետո նա անհետանում է, բայց վերադառնում կատարելությամբ և ներդաշնակությամբ հարստացած.«Ու որքան այդ հնչյունները դյութիչ էին, այնքան գեղեցիկ ու հմայիչ էր ինքը՝ Անտոնիո Բոնվինին…»:[7] Այնուհետև, համադրելով ստացված տեղեկությունները, սովորողները պետք է ցույց տան «Ես»-ի հերոսի և իտալացի որբ երաժշտի ընդհանրությունները՝ երկուսն էլ երիտասարդ են եղել, երկուսն էլ անմնացորդ սիրել են իրենց սրտի տիրուհիներին, երկուսի համար էլ հավասարապես չքնաղ է եղել սիրած էակը, երկուսն էլ բաժանվել են սիրելիից՝ բախվելով դառը իրականությանը … Առաջադրանքը կատարելուց հետո անհրաժեշտ է մեջբերել Ամենյան հայոց բանաստեղծի հետևյալ խոսքերը.«Ծաղիկը դրած է մեջտեղը և նույն ծաղկից մեղուն մեղր է շինում, օձը՝ թույն»:[8] «Ես»-ի հերոսը, ով ուներ փայլուն ապագա, իր սիրելիի մերժումը ստանալուց հետո լցնում է հոգին վրեժի թույնով, որը հաղթում է նրա ինքնասիրությանը, հաստատակամությանը, սպանում է նրա մեջ հավատը սեփական ուժերի հանդեպ, և դա է պատճառը, որ նա պարտվում է մարդու հարուցած խոչընդոտներից, այնինչ հոգևոր հարստություն ունեցող, ինքնավստահ և վեհ երիտասարդը բռնում է ինքնակատարելագործման ուղին: Սովորողը նաև պետք է ձեռքբերված գիտելիքները համադրի և հասկանա, որ պատմվածքում խորը արհամարհանքի է արժանանում հոգեպես աղքատ և իր ձեռակերտ բարձունքից Անտոնիոյի անձեռակերտ բարձունքի առջև ծնկի իջած Ջուլիետտան:«Դուք վերևն էիք,— ես ներքևը, և այդ Ձեզ իրավունք էր տալիս արհամարհանքով նայելու դեպի ներքև: Բայց Դուք

[6] Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1995, էջ 121:

[7] Նույն տեղում:

[8] Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ 6, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարկչություն, Երևան, 1994, էջ 167:

հաշվի չէի քառել, որ ներքև գտնվողները երբեմն թևեր են առնում, թռչում վերև»[9],- ահա Ս. Սարգսյանի բնորոշմամբ «հպարտ հնչող մարդու նշանաբանը»[10], որը բավական է Ջուլիետտայի նմաններին շոնդալից ապտակ հասցնելու համար.բառերը դիպուկ են պարզ, բայց մտածելու, խորհելու տեղիք տվող: Պատմվածքի վերջում անհրաժեշտ է հիշել Ջուլիետտայի հետևյալ խոսքերը. «Գիտեմ, այս բանը շատ էլ հաճելի չպիտի լինի քեզ համար, բայց ի՞նչ արած, աշխարհիս մեջ ամեն բան պատահում է և ա՛մեն բան կարող է պատահել», այնուհետև անհրաժեշտ է ավելացնել, որ դրա հետ մեկտեղ մարդն ավելի ուժեղ է, քան կարող է պատկերացնել, իսկ կյանքում բաձրանում են ոչ թե կամազուրկ մարդիկ, ովքեր հեղինակի բնորոշմամբ նման են «փտած ծառի կոճղին բսած մի մգլած մակաբույծի»[11], այլ նրանք, ովքեր երկաթակուռ կամքով են զինված, ովքեր ոչ թե ընկճվում են կյանքի առաջին իսկ հարվածից, այլ մեծ դժվարություններ հաղթահարելով՝ հետզհետե բարձրանում են մինչև գլխապտույտ բարձունքներ:

Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքը ուսուցանելիս սովորեցնողը ակտիվ մեթոդների կիրառման շնորհիվ առավել հեշտությամբ կկատարի իր առջև դրված խնդիրները. սովորողը կճանաչի գրական սեռերը և տեսակները, գաղափար կկազմի պատմվածքի ժանրային առանձնահատկությունների մասին, կընկալի տվյալ պատմվածքի հիմնական գաղափարը, դատողություններ կանի, արտահայտիչ կընթերցի պատմվածքը, ինչպես նաև կընկալի տեքստի տարբեր մասերի տրամաբանական կապը, գեղարվեստական նրբերանգները, կսովորի նոր բառեր ու արտահայտություններ, կառաջադրի բնութագրական սեփական տարբերակներ ու լուծումներ:

Ա. Սարգսյան

ՆԱՐ-ԴՈՍԻ «ԵՍ ԵՎ ՆԱ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ամփոփում

Հետազոտության մեջ ներկայացված է Նար-Դոսի «Ես և Նա» պատմվածքի ուսուցումը դպրոցում: Առանաձնացված են ուսուցման մի-քանի ակտիվ մեթոդներ, որոնց կիրառմամբ Նար-Դոսի «Ես և Նա» պատմվածքի ուսուցումը առավել արդյունավետ է և զարգացնող:

[9] Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1995, էջ 127:

[10] Սարգսյան Սաքո, Նար-Դոս, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1973, էջ 85:

[11] Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1995, էջ 128:

А. Саргсян

ИЗУЧЕНИЕ РАССКАЗА НАР-ДОСА "Я И ОН" В ШКОЛЕ

Резюме

В исследовании представлен метод преподавания рассказа Нар-Доса "Я и Он" в школе. Были выделены некоторые активные методы обучения, при использовании которых изучение рассказа Нар-Доса "Я и Он" будет более эффективным и развивающим.

A. Sargsyan

THE TEACHING OF THE STORY OF NAR-DOS “ME AND HIM” IN SCHOOL

Summary

The method of teaching of Nar-Dos’s story “Me and Him” was introduced in the essay in school.The active methods of studying were mentioned, by means of using them in the studying of Nar-Dos’s story “Me and Him” became more effective and developing.